ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ

ՔԱՂՎԱԾՔ

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.06.2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Գյուլագարակ համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Վռամ Գյուլզադյանը, Կարեն Լալազարյանը, Արմեն Մարիկյանը, Վահե Նալբանդյանը, Ստեփան Օհանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ռ.Վարդանյանը, Վարդաբլուր, Հոբարձի, Գարգառ, Պուշկինո, Ամրակից բնակավայրերի վարչական ղեկավարները, Պուշկինո և Ամրակից բնակավայրերի մի շարք բնակիչներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մհեր Գևորգյանը, արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Թամարա Գրիգորյանը:

Օրակարգում՝

1.Գյուլագարակ համայնքի ավագանու 2020 թ. հունիսի 08-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/ զեկ. Թ.Գրիգորյան/

2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցօգնություն տրամադրելու մասին

/ զեկ. Վ.Դավթյան/

3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության տրամադրելու մասին

/զեկ. Ա. Ֆրանգյան/

4. «Հայաստանի համայնքների միություն» ՀԿ-ին համայնքային անդամավճարը փոխանցելու մասին

/զեկ. Թ.Գրիգորյան/

5.Հողի հարկի արտոնություններ սահմանելու մասին

/զեկ. Հ. Մաթևոսյան/

6.Գյուլագարակ համայնքի ավագանու 2020թ. հունվարի 22-ին թիվ 02-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

/զեկ. Մ.Գևորգյան/

7.Գյուլագարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

/զեկ.Գ. Ներկարարյան/

Ընթացիկ հարցեր

- Ամրակից բնակավայրի բնակիչների հարցի քննարկում
- Պուշկինո բնակավայրի բնակիչների հարցի քննարկում
- Գյուղատնտեսի հարցի քննարկում

Օրակարգը ներկայացրեց աշխատակազմի քարտուղարը, ավագանին քննարկեց, որոշեց հաստատել օրակարգը:

Կողմ- 6, դեմ 0 քվեարկությամբ ընդունվեց որոշում թիվ 26-ը:

Համայնքի ղեկավարի առաջարկությանը ընթացիկ հարցերը սկզբում քննարկելու վերաբերյալ ավագանին չառարկեց, Ա Սարգսյանը առաջարկեց, եթե ցանկանում են բնակիչները կարող են նաև հարցի քննարկումից հետո էլ մնան մասնկցեն օրակարգի հարցերի քննարկմանը:

Ամրակից բնակավայրի բնակիչ Միսակ Իսպիրյանը ներկայացրեց իրենց խմելու ջրի հարցը, ջուրը տրվում է միայն առավոտյան մեկ ժամով արտակարգ դրության պայմաններում ստեղծվել է բարդ իրավիճակ, նշեց որ ջրի հարցը վերաբերվում է միայն մի թաղամասին:

Համայնքի ղեկավարը տվեց պարզաբանումներ նշեց, որ «Վեոլիա»-ի հետ ունենք ծրագիր, ջրագծերի հետ կապված, եթե հարցին երկու ամսվա ընթացքում լուծում չտրվի արդեն քայլեր կձեռնարկվեն ավագանու հետ համատեղ լուծում գտնելու համար:

Նորից բնակիչը ներկայացրեց խնդիրը ավելի մանրամասն, խնդրեց հարցին լուծում տալ սեղմ ժամկետում, հանդես եկավ նաև այլ բնակիչ, նա ներկայացրեց, որ խնդիրը կա շուտվանից, նոր չէ, որ ի հայտ է եկել ուղղակի անընդհատ ձգձգվում է ջրի խնդրի լուծումը:

Հարցի վերաբերյալ արտահայտվեց Ամրակից բնակավայրի վարչական ղեկավարը, նա մանրամասն ներկայացրեց այդ թաղամասի ջրագծի ստեղծման գործընթացի վերաբերյալ 2010 թվին կառուցված պոմպակայանի Գերմանական կազմակերպության աշխատանքների ջրամբարի վերաբերյալ: Քննարկումներից հետո համայնքի ղեկավարը առաջարկել է մասնագետների հետ այցելել բնակավայր, տեղում ուսումնասիրել խնդիրը հարցին տալ հնարավորինս արագ լուծում, ավագանին էլ տվեց իր համաձայնությունը:

Ընթացիկ հաջորդ հարցի վերաբերյալ, որն է Ալբերտ Մովսիսյանի տան հարցը ներկայացվեց, որ տունը փլվել է հիմնականում տանիքը, համայնքի ղեկավարը նշեց որ համայնքապետարանը այնքան հնարավորություն չունի, որ նոր տուն գնի կամ վերանորոգի սոցօգնությունն էլ 50000 դրամից ավելի հնարավոր չէ տրամադրել:

Քննարկումներից հետո, առաջարկվեց նոր տուն գնելու դեպքում, համայնքապետարանը կաջակցի ավագանու հետ համատեղ 200-300 հազար դրամին համարժեք աշխատանքով:

Օրակարգի հարցերի քննարկումը սկսվեց 2-րդ հարցից՝ 1-ին հարցի քննարկումը տեղափոխվեց վերջում: Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Թ.Գրիգորյանը ներկայացրեց «Հայաստանի համայնքների միությանը» գումար փոխանցելու մասին որոշման նախագիծը:

Ավագանու անդամներ մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը, համայնքի ղեկավարը, առաջարկում է ընդունել որոշման նախագիծը, ավագանին քվեարկեց:

Միաձայն քվեարկությամբ 6 կողմ, ավագանին ընդունում է թիվ 28 որոշումը:

Օրակարգի հաջորդ հարցի շուրջ լսեցին համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Ա.Ֆրանգյանի զեկույցը, նա ներկայացրեց համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության տրամադրելու մասին, ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նիստը վարողը առաջարկեց ընդունել որոշման նախագիծը, դնում է քվերակության, 6 կողմ քվեարկությամբ ընդունվում է թիվ 27 որոշումը:

Օրակարգի հաջորդ հարցի շուրջ լսեցին համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Հ. Մաթևոսյանի զեկույցը, նա ներկայացրեց հողի հարկի արտոնություններ սահմանելու մասին հարցը՝ նշեց, որ հողի հարկի արտոնություններ են սահմանվել միայն արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների և վիրավորված ազատամարտիկների ընտանիքներին, իսկ հողի հարկի տույժի արտոնություններ այն բնակիչներին, որոնք ամբողջությամբ մարել են հողի հարկի կուտակված մայր գումարները, պարտավորվել այսուհետ վճարումները կատարել ժամանակին, Հ.Մաթևոսյանը ներկայացրեց նաև արտոնությունների գումարի չափը, մարած գումարի չափը, բարձրաձայն կարդաց բոլորի անունները, նշելով մուծված և զիջված գումարը:

Համայնքի ղեկավարը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության, 6 կողմ, 0 դեմ քվեարկությամբ ընդունվեց թիվ 29 որոշումը:

Օրակարգի հարցի շուրջ լսեցին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, նա ներկայացրեց ավագանու 2020 թվականի հունվարի 22-ի թիվ 02 որոշման հավելվածում փոփոխություն կատարելու մասին ավագանու որոշման նախագիծը, նշեց կատարվող փոփոխությունը՝ ավելացվել է 1 դրույք սպորտի մասնագետի հաստիք, 0,75 դրույք հավաքարարի հաստիք:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նիստ վարողը առաջարկում է որոշման նախագիծը ընդունել և դնում է քվեարկության:

Միաձայն 6 կողմ, 0 դեմ քվեարկությամբ ավագանին ընդունում է թիվ 30 որոշումը:

Օրակարգի հաջորդ հարցի շուրջ ավագանուն զեկույց ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Գ. Ներկարարյանը, նա ըստ հոդվածների նշեց փոփոխությունները, կապված երկրում տիրող արտակարգ իրավիճակի հետ, մուտքերում գումար է փոփոխվել:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նիստ վարողը առաջարկում է որոշման նախագիծը ընդունել և դնում է քվեարկության:

Միաձայն 6 կողմ, 0 դեմ քվեարկությամբ ավագանին ընդունում է թիվ 31 որոշումը:

Օրակարգի հաջորդ հարցի շուրջ լսեցին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի զեկույցը, նա ներկայացրեց համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին գումար տրամադրելու մասին որոշման նախագիծը, նշեց ընտանիքների քանակը, տրամադրվելիք գումարների չափը: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նիստը վարողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության, 6 կողմ, 0 դեմ քվեարկությամբ ավագանին ընդունում է թիվ 32 որոշումը:

Ընթացիկ հարցերից՝ գյուղատնտեսի վերաբերյալ, ներկայացրեց համայնքի ղեկավարը, նա նշեց, որ կապված տարբեր, հատկապես ցեցի հիվանդության հետ, անհրաժեշտություն կա, որ համայնքն ունենա գյուղատնտես, որպեսզի անկացնի սեմինարներ, իրազեկի համայնքի բնակիչներին հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների վերաբերյալ: Ավագանին չառարկեց համայնքի ղեկավարի առաջարկությունը:

Նիստն ավարտվեց:

Նիստը վարեց՝ **Միհեր Գևորգյան**

Նիստն արձանագրեց՝ **Թամարա Գրիգորյանը**